# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետի
գիտական խորհրդի 29.06.20թ. հեռավար կարգով անցկացված թիվ 14.19-20 նիստի

Հարցմանը մասնակցել են գիտական խորհրդի 36 անդամներից 29-ը:

**Հաստատվեց հետևյալ օրակարգը՝**

Մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի կողմից ներկայացված Ի.Վ. Վարդանյանի, Ե.Բ. Դալյանի, Վ.Ի. Վարդանյանի, Վ.Ա. Թումյանի "Մոլեկուլային ֆիզիկայի խնդիրների ժողովածու" ուսումնական ձեռնարկի ամբիոնի մասնագիտական առարկաների համար ուսումնական ծրագրերում ընդգրկելու նպատակահարմարության քննարկում և հաստատում:

**Լսեցին**

Մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի կողմից ներկայացված Ի.Վ. Վարդանյանի, Ե.Բ. Դալյանի, Վ.Ի. Վարդանյանի, Վ.Ա. Թումյանի "Մոլեկուլային ֆիզիկայի խնդիրների ժողովածու" ուսումնական ձեռնարկի ամբիոնի մասնագիտական առարկաների համար ուսումնական ծրագրերում ընդգրկելու նպատակահարմարության հարցը:

**Ելույթ ունեցավ՝**

Ֆիզիկայի ֆակուլտետի Մեթոդական խորհրդի նախագահ Լ. Ասլանյանը: Նա ներկայացրեց ուսումնական ձեռնարկի վերաբերյալ ֆիզիկայի ֆակուլտետի մեթոդական խորհրդի եզրակացությունը:

**Որոշեցին՝**

Հաշվի առնելով ֆիզիկայի ֆակուլտետի մեթոդական խորհրդի եզրակացությունը՝ երաշխավորել Մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի կողմից ներկայացված "Մոլեկուլային ֆիզիկայի խնդիրների ժողովածու" ուսումնական ձեռնարկի (հեղինակներ՝ Ի.Վ. Վարդանյանի, Ե.Բ. Դալյանի, Վ.Ի. Վարդանյանի, Վ.Ա. Թումյանի) ընդգրկումը ուսումնական գործընթացում՝ որպես մասնագիտական առարկաների համար նախատեսված հիմնական ուսումնական ձեռնարկ մայրենի լեզվով և դրա տպագրությունը ԵՊՀ տպարանում: (29 կողմ)

Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան՝ Ռ.Ս. Հակոբյան

Խորհրդի քարտուղար՝ Գ.Հ. Հովհաննիսյան